

ծուխքն են աստուածարան բարունապետքն մեր. զի ի գալ նոցա յայսմ քաղաք, որոճելով եւ խրատելով փրկութիւն լիցի հաւատացելոց: Այլ եւ յիշատակ փոխեցելոյն (= Գրիգոր պատրիարքին) առ Քրիստոս ՌՉԵ (= 1636) թվին, հոգեւոր, ..

Կիսատ մնացած է յիշատակարանս, որուն շարունակութեան մէջ հաւանարար պիտի գտնէինք թէ Ղալթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին թաղուող պատրիարքն է Գրիգոր Կեսարացին եւ ուրիշ մանրամասնութիւններ: Յաւալի է որ իր գերեզմանին տեղն ալ չէ ըսուած:

Կեսարացի պատրիարքին թաղումը Երեմիա Չէլէպին ալ յիշած է իր Պարոյրին մէջ (Հմմտ. Ընդարձակ Օրացոյց 1901, էջ 90), ուր Կեսարացիին մահը գրուած է, ըստ Երեմիա Չէլէպիի ՌՉԳ (= 1635) ին փոխանակ 1636 ի:

## ՆԿԱՐԱԳՐԻ ՄԱՐԿԸ

Կոլոտ Յովհաննէս պատրիարքի յիշատակին († 1741 Փետրվար 13, Ուրբաթ):

Կոլոտի մահուան 162<sup>րդ</sup> տարեդարձին առթիւ յողում մը գրած էի Արևելքի համար:

Արևելք ջլատեց գրուածս՝ գրաքննութեան սիրուն եւ ինչ որ կրցաւ փրկել այդ ջլատուածէն՝ հրատարակեց իր 5179 թիւին մէջ (1903 Փետր. 13. Եջ.):

Վեհափ. Կաթողիկոսին հրամանով, նոյնութեամբ վերատպուած է Արևելքի Ղալկոտոր հրատարակութիւնը Արարատի մէջ, (Արարատ, 1.2. տարի 1903, Թիւ 2-3), ինչպէս որ հաղորդեց ինձ Ս. Էջմիածնի պաշտօնական հանդիսին խմբագրապետը, Հոգ. Տ. Կարապետ Վրդ. Տէր-Մկրտիչնան:

Ըաջալերուած այս գրուածի համար եղած բարձրագոյն գնահատումէն, լման կը դնեմ զայն այս տեղ իբր ամփոփումը Կոլոտի վրայ գրածներուս:

«Այլ որ փոխմա՞ս ու իսկուէս յաւանդեմքն էդիւ իւրոյ ընչ-ընչն է լիբիլին յայնմնէ հաւատարմութեան զորոս:

Մթին գիշերւան արհաւիրքը, որ կը սաստկանայ երկարատեւ հրդեհի մը փաղաղումներով, ամէն սիրտ դող հանած է: Գեղեցիկ շէնք